ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 4, 1959 Общественные науки

Ս. Խ. Մնացականյան

ԶՎԱՐԹՆՈՑԻ ՎԵՐԱԿԱԶՄՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Զվարթնոցը հայ ժողովրդի պատմության մեջ եղավ այն հուշարձանը, որտեղ ի մի հավաքվեց նրանից դարեր առաջ մշակված ճարտարապետական կուլտուրան ու շինարարական արվեստը, և որտեղ հայ հանճարեղ ճարտարապետները կարողացան դրսևորել իրենց մտահղացումների ամբողջ վեհությունը։ Ինչպես հայտնի է, Զվարթնոցի պեղումներն սկսվեցին 1900 թ. գարնանը և շարունակվեցին մինչև 1904 թ. օգոստոս ամիսը։ Զվարթնոցի գիտական ուսումնասիրության պատմությունը անխզելիորեն կապված է Թորոս Թորամանյանի անվան հետ։ Հայաստան գալով 1903 թ., նա 1904 թ. մարտ ամսից սկսած մասնակից է լինում պեղումներին և մնում Զվարթնոցում մինչև նույն թվականի օգոստոս ամիսը, երբ պեղումները մեկ ամբողջ տարով ընդհատվում են, Խաչիկ Դադյանի աքսորի պատճառով։ Այդ չորս ամիսների ընթացքում նա կազմում է տաճարի հատակագիծը և նույն թվականի ամռանը մեկնում Անի, մասնակցելու Ն. Մարի գլխավորած պեղումներին։ 1905 թ. ավարտելով տաճարի վերակազմության նախագիծը, նա հրատարակում է իր անդրանիկ աշխատությունը, նվիրված Զվարթնոցին («Մուրճ», 1905, № 5)։

Պեղումները շարունակվում են նաև հաջորդ տարում, հայտնաբերվում են նաև նորանոր քարեր, որոնք, պարզ է, չէին կարող հաշվի առնված լինել Թորամանյանի վերակազմության առաջին նախագծում։ Այդ մասին հիշատակում է Խաչիկ Դադյանը՝ գրելով, թե Թորամանյանի վերակազմության նախագծի մեջ պետք է հիմնովին վերափոխվեն շքամուտքերը, համապատասխան նորահայտ քարերի[1]։

Վերակազմության նախագծի շուրջը ծագած մեծ վեճերը հիմնականում ավարտվեցին 1906 թ., երբ Անիում հայտնաբերվեց Գագիկաշենի՝ Զվարթնոցի տիպի մի տաճարի մոդելը, որի ընդհանուր ձևերը համընկան Թորամանյանի մինչ այդ կատարած վերակազմության նախագծի ձևերին, թեև դրանից հետո էլ որոշ ուսումնասիրողներ (օրինակ, ճարտ. Ք. Տեր-Սարգսյանը) բնավ համաձայն չէին վերակազմության նախագծի մի քանի խիստ կարևոր էլեմենտների՝ և հատկապես գալերեայի ու երկրորդ յարուսի պատկերման հետ։ Ըստ ժամանակի հաջորդ աշխատանքը՝ դա մոդելի պատրաստումն էր, որի լուսանկարը հրատարակվել է 1911 թ.։ 1918 թ. հրատարակվում է Հ. Ստրժիգովսկու աշխատությունը, որտեղ ներկայացված են Թորամանյանի կողմից կատարված մի շարք գծագրեր, ընդ որում այստեղ կան և 1905 թ. վերակազմության նախագծի կտրվածքը (որի գմբեթը կտրել էր Դադյանը) և «ձգված» համաչափություններ ունեցող տարբերակի ճակատը։

[1] Խ. Դադյան, 1907 թ. հնագիտական պեղումներ, «Արարատ», 1909, էջ 170։

Թվում է, թե բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ «ձգված» համաչափություններ ունեցող տարբերակը կատարվել է ավելի ուշ և նա է Թորամանյանի վերջին խոսքը։ Սակայն այստեղ կա մի խիստ էական հանգամանք։ Այն ժամանակ, երբ առնվազն 1911 թ. կատարված մոդելում շքամուտքերը ուղղված



Նկ. 1. Զվարթնոցի հատակագիծը ըստ Թ. Թորամանյանի։

են, «ձգված» համաչափություններ ունեցող տարբերակում դեռևս չկան շքամուտքի նորահայտ քարերը, մի բան, որը որոշակի կերպով խոսում է նրանց կատարման հերթականության մասին։

Թորամանյանի համար տաճարի հատակագիծ կազմելը կապված չէր էական բարդությունների հետ, որովհետև տեղում պահպանվել էին բոլոր անհրաժեշտ էլեմենտները։ Զգալի դժվարություն էր ներկայացնում առաջին հարկի, և հատկապես օդակաձև գալերեայի հարցը, որի կոնստրուկցիայի հայտնագործումը պետք է համարել նրա վերակազմության նախագծի առավել հաջողված մասը։ Ըստ Թորամանյանի, առաջին հարկի օդակաձև գալերեայի վրա կար համանման դասավորություն ունեցող մի հարկ ևս, որը լուսավորվում էր

հուշարձանի պարագծով դասավորված կլոր լուսամուտների միջոցով։ Կառուցվածքի երկրորդ յարուսը կազմում էր տետրակոնխը, որը ըստ Թորամանյանի շրջապատված էր օղակաձև գալերեայի պատի շարունակությունը կազմող մի շրջանաձև պատով։ Երրորդ յարուսը կազմում էր 16 նիստ ունեցող թմբուկը, որը ինչպես և առաջին երկու յարուսները, ձևավորված էր խուլ կամարաշարքով (նկ. 2)։



Նկ. 2. Զվարթնոցի մոդելը և ճակատը ըստ Թ. Թորամանյանի։

Նախքան հուշարձանի ծավալային կոմպոզիցիային անցնելը անդրադառնանք նրա հատակագծին։

Թորամանյանը հրատարակել է մի քանի հատակագիծ, և ուշագրավ է, որ ինչքան գալիս ենք դեպի ետ, այնքան նրանք ճշտվում են, այնքան վերանում թերությունները, թեև նույնիսկ ամենավերջին, Ստրժիգովսկու աշխատության մեջ հրատարակված գծագրում առկա են որոշակի սխալներ։ Այսպես, օրինակ, եռաստիճան տրմնախարիսխը շատ լայն է պատկերված, և դուրս է գալիս նույնիսկ անկյունագծային դասավորություն ունեցող շքամուտքերից, միանգամայն ավելորդ է արտաքին պատի ներսի կողմից դասավորված որմնասյունները միացնող օղակաձև գիծը և այլն։ Սակայն առավել էական թերությունը՝ դա արևելյան ուղղանկյուն կառուցվածքը տաճարի շրջանաձև պատի հետ միաձույլ պատկերելն է, մի բան, որը արմատապես ժխտվում է նշված կառուցվածքի և տաճարի շրջանաձև պատի միջև կոնստրուկտիվ կապերի փսպառ բացակայությամբ (նկ. 4)։

Դժվար չէ տեղում այժմ էլ տեսնել, որ այն ուղղակի հպված է տաճարի շրջանաձև պատին, և քարերի շարքերը բնավ չեն համապատասխանում միմյանց։ Այս բանը կարելի է զգալ նաև ուղղանկյուն հավելվածքի մեջ օղակաձև պատի հիմքի առկայությունից, որովհետև, եթե նրանք կառուցված լինեին միաժամանակ, ապա ոչ մի անհրաժեշտություն չէր ներկայացնի պատի այս մասը ևս անել շրջանաձև։ Պարզ է դառնում, որ այն ավելացված է հետագա-

յում և չէր մտնում տաճարի սկզբնական կոմպոզիցիայի մեջ։ Չի կարելի չնշել նաև մի այլ հանգամանք։ Թորամանյանի կողմից հրատարակված բոլոր հատակագծերում արևելյան արսիդը միանգամայն իրավացի կերպով պատկերված է խուլ (նկ. 1, 3), առանց կամարաշարքի (ինչպես այդ բանում կարելի է համոզվել այժմ էլ, դիտելով մուլթերի և արևելյան արսիդի հատման հանգույցները)։ Սակայն, մեզ անհայտ պատճառներով, նրա աշխատությունների առաջին հատորում պատկերված է մի հատակագիծ, որտեղ արդեն արևելյան արսիդում ևս առկա է սյունաշարքը, ընդ որում դժվար չէ տեսնել, որ այդ հատակագիծը ոչ թե նոր է կազմված, այլ նույն, Ստրժիգովսկու աշխատության մեջ հրատարակված հատակագիծն է, որի վրա հետագայում ավելացվել է արևելյան սյունաշարքը։



Նկ. 3. Զվարթնոցի կտրվածքը ըստ Թ. Թորամանյանի։

Թորամանյանի կողմից կատարված կտրվածքներից հայտնի է միայն մեկը դա այն կտրվածքն է, որի գծագիրը կտրել էր Մաչիկ Դաղյանը։ Կանգ չառնելով մանր անճշտությունների վրա, անդրադառնանք առաջին յարուսի բարձրությանը։ Դանն այն է, որ առաջին հարկարաժնի շրջանաձև սրահը ծածկող թաղի կրունկը պետք է դասավորված լինի ոչ ցածր, քան կրկնակի կորություն ունեցող կամարների վերին հարթությունը (ճիշտ այնպես, ինչպես այդ արված է Թորամանյանի կողմից Դաղիկաշենի կտրվածքում)։ Մինչդեռ այստեղ գալերեայի թաղի կրունկը ուղղակի նստում է... էքսեդրայի կամարաշարքի վրա, մի բան, որը ակնհայտ սխալ է և բնավ անհնար (նկ. 3)։ Ինչպես ցույց է տալիս չափագրությունը, այդ մեծաթռիչք կամարների սլաքը հավասար է երեք մետրի (համարյա թե նույն չափն է ցույց տալիս Թորամանյանը նաև Դաղիկա-



Նկ. 4. Զվարթնոցի արևելյան հավելվածքի և տաճարի հիմնապատերի կցման հանգույցը (հարավ-արևմտյան անկյունը նկարից)։

շենում)։ Այստեղից դժվար չէ կռահել, որ օղակաձև սրահի ծածկի թեզի կրունկը իր հերթին պետք է բարձրացվի առնվազը երեք մետրով, որպեսզի գծագիրը ճիշտ կերպով արտահայտի հենց իր, Թորամանյանի միանգամայն իրավացի դրույթը այդ կամարների տեղի և նշանակության մասին։ Սակայն այսպիսի բարձրացումը (որը միանգամայն անխուսափելի է կոնստրուկտիվ էլեմենտների ճիշտ պատկերման տեսակետից) լիովին վերացնում է «սեղմված» և «ձգված» համաչափություններ ունեցող տարբերակների միջև եղած տարբերությունը, և պարզ է դառնում, որ Թորամանյանի կատարած կտրվածքում տեղ գտած այս ակնհայտ սխալի հետևանքով նշված գծագիրը չի կարող ծառայել վերակազմության նախագծի հիմնական էլեմենտները բացահայտող փաստաթուղթ։

Վերը նշեցինք, որ ըստ Թորամանյանի օղակաձև սրահի վրա եղել է մի հարկ ևս, որտեղ կարող էին տեղավորվել առնվազն մի քանի հարյուր մարդ։ Միանգամայն տրամաբանական է, որ այդ վերնահարկը պետք է լայն բացվածքներով կապվեր տաճարի ինտերյերի հետ, ճիշտ այնպես, ինչպես այդ տեսնում ենք ժամանակակից բյուզանդական տաճարներում, որովհետև հակառակ դեպքում վերնահարկի կառուցումը ոչ մի կերպ չէր կարող արդարացնել իրեն։ Այսպիսի կապի ստեղծման տեսակետից միանգամայն տրամաբանական է թվում Թորամանյանի կողմից ենթադրվող սյունաշարքի գոյությունը, որը և առկա է նրա կազմած կտրվածքում։ Մյուս կողմից՝ առաջին և երկրորդ հարկերի սյուների համանման դասավորությունը կասկած չի թողնում, որ վերնահարկի ծածկը ևս, ինչպես և առաջին հարկի օղակաձև սրահի ծածկը պետք է որ հենվեր կրկնակի կորություն ունեցող, լայնաթռիչք կամարների վրա[2]։ Սակայն այն հանգամանքը, որ այստեղ ևս թույլ է տված նույն սխալը, ինչ որ առաջին հարկում, ստիպում է այս թաղը ևս բարձրացնել առնվազն երեք մետրով, որպեսզի կոնստրուկտիվ էլեմենտները ստանան իրենց նորմալ լուծումը։ Դժվար չէ տեսնել ուրեմն, որ այդպիսի մշակման ժամանակ առաջին յարուսը պետք է բարձրանա առնվազն 6 մետրով, իսկ կրկնակի կորության լայնաթռիչք կամարաշարքերը դրվեն մեկը մյուսի վրա երկու անգամ, մի բան, որը միանգամայն անհնարին է և անտրամաբանական։

Թվում է, թե կոնստրուկտիվ տեսակետից հարցի լուծմանը ավելի մոտ է Թորամանյանի մյուս տարբերակը, որտեղ ենթադրվում է մույթերի հետևի մասերում մեծ պահարանների գոյությունը։ Այս «պահարանների» սխեմատիկ գծագրերից, իհարկե, դժվար է կռահել կոնստրուկտիվ առանձին մանրամասների ձևերը։ Սակայն մի բան պարզ է, որ այս տարբերակը ոչ մի ընդհանուր բան չունի վերնահարկի սյունաշար տարբերակի հետ և վերնահարկն այստեղ տաճարի հետ է կապվում մի լայն (առնվազն 4—5 մետր լայնություն ունեցող) բացվածքի միջոցով (նկ. 6)։ Սակայն մեծաթռիչք և կրկնակի կորություն ունեցող կամարի առկայությունը այսպիսի մի խիստ ծանրաբեռնված հանգույցում չէր կարող շատ տարօրինակ տպավորություն չթողնել և միանգամայն

[2] Ընկատելով այս գծագրում թույլ տված սխալը, ընկ. Կ. Ղաֆադարյանը առանց որևէ ծանոթագրության հրատարակել է այն իր կողմից կազմած Թորամանյանի աշխատությունների առաջին հատորում, և դա դարձել հիմնական կռվան հերքելու մեր դրույթները («Տեղեկագիր», 1958, № 7), որոնք մենք խիստ համառոտակի շարադրել էինք «Զվարթնոցի մասնակի վերականգնման հնարավորության մասին» հոդվածում («Սովետական արվեստ», 1957, № 1)։

հասկանալի է, որ Թորամանյանը Գագիկաշենի վերակազմության նախագծում շատ անգամ փոքրացրեց այդ բացվածքը և փոխարինեց այն մի սովորական լուսամուտով։ Միայն այսպիսի լուծման ժամանակ է, որ վերնահարկը ստացվում է համեմատաբար ցածր և հնարավոր լինում նրա բարձրությունը սահմանափակել կտրվածքում ցույց տրված չափով։ Որ Զվարթնոցում ևս Թորամանյանը կիրառել է հենց այս տարբերակը, վկայում է տաճարի «ձգված» համաչափություններ ունեցող ճակատը։ Դժբախտաբար մեզ չի հասել վերջինիս համապատասխանող կտրվածքը, սակայն այն դժվար չէ կազմել, որովհետև առկա է և՛ հատակագիծը, և՛ ճակատը։



Նկ. 5. Զվարթնոցի պայմանական կտրվածքը, կատարված Թ. Թորամանյանի վերակազմության նախագծի հիման վրա։ Բարձրությունը ուղղված է համաձայն նրա կողմից կատարված ճակատի համաչափությունների։ Գունկտիրով ցույց է տրված (Ա - Ա) № 3 կտրվածքում պատկերված թաղը։

Պարզվում է, որ, եթե ուղղել առաջին յարուսի օդակաձև սրահի թաղակապ ծածկի բարձրության մեջ թույլ տված սխալը և վերնահարկի բարձրությունը թողնել անփոփոխ (որը, ինչպես նշվեց, հնարավոր է միայն առանցքային ուղղությամբ մեկ լուսամուտ դասավորելու դեպքում) տաճարի բարձրությունը կստացվի ճիշտ այնքան, ինչքան, որ այն պատկերված է՝ ձգված համաչափություններ ունեցող ճակատում (նկ. 5)։

Այս ամենից հետո դժվար չէ կռահել, որ Թորամանյանը ոչ թե ունեցել է երկու, «սեղմված» և «ձգված» տարբերակներ, այլ ուղղակի ուղղել է իր առաջին դծագիրը, տաճարին տալով ավելի սլացիկ տեսք։ Եվ միանգամայն մտացածին է այն կարծիքը, ըստ որի Թորամանյանի մոտ Զվարթնոցն ուներ սկզբում ավելի սեղմ համաչափություններ և միայն Գագիկաշենի պեղումներից հետո, ելնելով վերջինիս համաչափություններից, իբր թե բարձրացվել է տաճարի առաջին յարուսը[3]։

Ահա այս կապակցությամբ անհրաժեշտ է նորից անդրադառնալ մոդելին։ Բանն այն է, որ հատկապես այստեղ է, մոդելում, որ տեղ են գտել 1906—1907 թթ. ընթացքում հայտնաբերված շքամուտքի այն քարերը, որոնց մասին հիշատակում է Խաչիկ Դադյանը։ Այս հանգամանքը առաջնակարգ նշանակություն է ստանում այն պատճառով, որ այդ քարերի բացակայությունը «ձգված» համաչափություններ ունեցող դծագրում անժխտելի կերպով ցույց է տալիս մոդելի և տվյալ դծագրի կատարման հերթականությունը։ Իսկ այդ արդեն

[3] Գ. Ղաֆադարյան, նշված հոդվածը։

նշանակում է, որ, եթե Թորամանյանը նորից է անդրադառնում սեղմված համաչափություններ ունեցող տարբերակին, նա նորից չէր կարող կրկնել այդ նույն սխալը և պետք է, որ ներքին կոնստրուկցիաների մեջ մտցներ այնպիսի փոփոխություններ, որոնք իրոք ապահովեին այդ «սեղմված» համաչափու-



Նկ. 6. Վերնահարկերի տարբերակները ըստ Թորամանյանի կտրվածքի (ձախակողմյանը) և «Մուրճ» ամսագրում հրատարակված հատակագծի։

թյունների ստացումը։ Սակայն այդ հնարավոր էր անել միայն վերնահարկի վերացման միջոցով, որը և ամենայն հավանականությամբ արել է Թորամանյանը։

Եվ իսկապես՝ ի՞նչ էր իրենից ներկայացնում վերնահարկը։ Այդ մի լայն օղակաձև սրահ է մոտ 400 մմ մակերեսով, որը տաճարի հատակից մոտ 12 մետր բարձրության վրա շրջանցում է կենտրոնական տետրակոնխը, և որտեղ կարող են հավաքվել առնվազն մի քանի հարյուր մարդ լսելու և տեսնելու տաճարում կատարվող ժամասացությունը։ Այսպիսի վերնահարկեր լավ հայտնի են բյուզանդական ճարտարապետության մեջ, ընդ որում նրանց լայն ու ընդարձակ կամարաշարքերը ամենասերտ կապն են ստեղծում վերնահարկի և տաճարի կենտրոնական մասի միջև, իսկ մասսիվ աստիճանավանդակները ապահովում հարյուրավոր մարդկանց անց ու դարձը։

Մյուս կողմից Թորամանյանի պատկերած վերնահարկը հենց ճարտարապետական տեսակետից ոմնի խիստ վիճելի կողմեր։ Ինչպես տեսանք, սյունազարդ վերնահարկի գոյությունը լիովին բացառվում է, և շինարարական կոնստրուկցիաների տեսակետից քիչ թե շատ տրամաբանական ձևը՝ դա ներսի շրջագծային պատի առկայությունն է նրա մեջ արված երեք լուսամուտներով (ինչպես այդ պատկերել է նա Գագիկաշենի վերակազմության նախագծում)։ Ստացվում է շատ ուշագրավ պատկեր։ Տաճարի ամբողջ պարագծով ձգվող վերնահարկը, որտեղ կարող էին տեղավորվել մի քանի հարյուր մարդ և որը լուսավորված էր բազմաթիվ կլոր լուսամուտներով, փաստորեն կտրված էր տաճարի ինտերյերից և վերջինիս հետ հաղորդակցում էր միայն երեք լուսամուտների միջոցով, որոնց միջից ժամասացությունը կարող էին լսել և տեսնել ընդամենը մի քանի տասնյակ մարդ[4] (նկ. 7)։

[4] Ինքնին հասկանալի է, որ արևելյան կողմից աբսիդի վրա այսպիսի բացվածք չէր կարող գոյություն ունենալ։ Այդ նպատակին չէին կարող ծառայել նաև պահպանների լուսամուտները։

Վերնահարկն այստեղ ներկայանում է որպես մի կեղծ կառուցվածք, որն արված է կարծես թե ճակատի կլոր լուսամուտները տեղավորելու համար և պատահական չէ, որ Ն. Մառը, խոսելով նրա մասին, անվանում է այն ոչ այլ կերպ, քան գաղտնի անցք [скрытый ход][5]։ Չի կարելի չնշել նաև վերակազմության նախագծում ցույց տրված վերնահարկի լուսամուտների տարօրինակ դասավորությունը, որոնք, ըստ Թորամանյանի, տեղավորված են հատակից ընդամենը 30 սմ բարձրության վրա, մինչդեռ վերնահարկի ամբողջ բարձրությունը կազմում է 6 մետր։ Վերակազմության նախագծի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ լուսամուտների այսպիսի տեղաբաշխումը թելադրվել է արտաքին ճակատի համաչափությունից, և կամարաշարքերից վերև ստացվող տարածության կենտրոնում նրանց դասավորելու ձգտումն է, որ հասցրել է բացվածքների ֆունկցիոնալ նպատակասլացությանը այսպիսի խիստ անտեսմանը։ Անդրադառնալով վերնահարկի աստիճաններին, անհրաժեշտ է նշել, որ չի պահպանվել նրանց և ոչ մի հետք։ Ավելին՝ տաճարի ներսում տեղ և ոչ մի տեղ, որտեղ հնարավոր լիներ նրանց տեղավորել։ Վերը նշվեց արդեն, որ արևելյան կողմի հավելվածքը ուղղակի հպված է տաճարի շրջագծային կոմպոզիցիային, և նրանց պատերի մեջ չկա և ոչ մի կոնստրուկտիվ կապ։ Այստեղից դժվար չէ եզրակացնել, որ այն չի հանդիսանում տաճարի սկզբնական կոմպոզիցիայի օրգանական մասը և ավելացված է հետագայում։ Ենթադրել, որ մի բանի հարյուր մարդ վերնահարկ են բարձրացել (որը տեղավորված է տաճարի հատակից 12 մետր բարձրության վրա) փայտյա շարժական աստիճաններով, կլիներ խիստ անտրամաբանական, և պատահական չէ, որ ինքը Թորամանյանը ևս վճռականորեն բացառում է այդ։ Վերնահարկի գո-





Նկ. 7. Զվարթնոցի վերնահարկը, պատկերված Գագիկաշենի վերնահարկի ձևով։

[5] H. Я. Марр. Ани. М.– Л. 1934, стр. 58.

[6] Թ. Թորամանյան. Նյութեր..., հատ. 1-ին, էջ 219։ Ինչ վերաբերում է Թորամանյանի հիշատակությանը, որ վերնահարկում եղել են պահարաններ և պեղումների ժամանակ այնտեղ հայտնաբերվել են եկեղեցական հագուստների մնացորդներ, ապա պետք է ասել, որ այդ աղբը այսօր էլ սարդ կերպով կարելի է տեսնել տաճարի հարավարևելյան մասում բնկած դանդվածի մեջ և իրենից ներկայացնում է մուրճի, արտիղների և թաղի հիմքը կազմող պատերի հատման հանգույցը։

յությունը խիստ թեական էին համարում ճարտարապետ Ք. Տեր-Սարգսյանը և Հ. Ստրժիգովսկին, և Ա. Կուզնեցովը։

Հանրագումարի բերելով վերը նշված դրույթները, կարող ենք եզրակացնել, որ վերնահարկի գոյությունը Զվարթնոցում չի ապացուցվում և ոչ մի իրական համոզիչ փաստով, և ճիշտ այնպես, ինչպես հայկական ճարտարապետության բոլոր հուշարձանները, կառուցված և Զվարթնոցից առաջ, և Զվարթնոցից հետո, նա էլ չի ունեցել վերնահարկ։ Ինչ վերաբերում է կլոր լուսամուտներին (որոնք, ինչպես պարզվում է այժմ, ծածկված են եղել քարե սալ շրջանակներով և լույսը թափանցել է վերջիններիս մեջ արված անցքերով միայն), ապա մեր կարծիքով, նրանք լուսավորել են շրջանաձև սրահի վերին մասերը և թաղակապ ծածկը, որը գտնվելով տաճարի հատակից մոտ 10—11 մետր բարձրության վրա, պարզ է, որ չէր կարող լուսավորվել տաճարը շրջանցող և շատ ավելի ցածր մակարդակի վրա գտնվող լուսամուտների միջոցով։ Ոչ պակաս նշանակություն է ունեցել նաև արտաքին ճակատի առաջին յարուսի ձևավորման հարցը, որովհետև ցածր լուսամուտները շրջանցող կամարաշարքից մինչև քիվը ընկած տարածությունը չէր կարելի թողնել առանց որևէ մշակման՝ այդ բանը կխախտեր տաճարի ճակատների ձևավորման ամբողջ կոմպոզիցիան։

Դառնանք այժմ տաճարի երկրորդ յարուսին։

Ինչպես հայտնի է, ըստ Թորամանյանի վերակազմության նախագծի, Զվարթնոցի երկրորդ յարուսը ունեցել է խիստ բարդ կառուցվածք (նկ. 8)։ Այստեղ ներսի քառակոնխ կոմպոզիցիան դրսից շրջապատված էր մի շրջագծային, դեկորատիվ պատով, որի վրա էլ բացվում էին նրա ամբողջ պարագծով տեղաբաշխված 32 լուսամուտները։ Դժբախտաբար Թորամանյանը չի հրատարակել նշված յարուսի հատակագիծը, սակայն վերջինիս կազմելը առանձին դժվարություն չի ներկայացնում, որովհետև կա և կտրվածքը և ճակատը։

Պարզվում է, որ ճակատում նշված 32 լուսամուտներից միայն 12-ը կարող էին լուսավորել տաճարը[7], իսկ մնացած 20-ը կեղծ են և բացվում են կենտրոնական քառաբսիդ տարածության և այն շրջանցող շրջագծային դեկորատիվ պատի միջև ստացվող դատարկ, անօգտագործելի տարածություններում (նկ. 9)։

Ավելին, Թորամանյանի մոտ լուսամուտներ են նշանակված նաև անկյունագծային ուղղություններով, այսինքն մույթերի դիմաց, որից պետք է ենթադրել, որ այդ մասում մույթերն ունեցել են շատ ավելի փոքր չափեր, և միաձուլված չեն եղել արտաքին շրջագծային պատի հետ։ Այսպիսով, դժվար չէ տեսնել, որ տաճարի երկրորդ յարուսի այս շրջագծային պատը ստացվել է միանգամայն արհեստականորեն, և բացի այն, որ չունի և ոչ մի կոնստրուկտիվ դեր, անչափ ավելացնում է մեծաթռիչք, կրկնակի կորություն ունեցող կամարների, և հատկապես առանձին կանգնած սյուների բեռնավորվածությունը։

Ոչինչ չլուսավորող բազմաթիվ լուսամուտներ, զմբեթակիր մույթերի արհեստական փոքրացում մինչև այն աստիճան, որ հարցականի տակ է դրվում զմբեթի կայունությունը, առանձին կանգնած արծվախոյակ սյուների մեծ գերլարվածություն (նկ. 10), որտեղ մոտ 20 մետր բարձրություն և 10 մետր լայ-

[7] Նշենք, որ Թորամանյանի կատարած կտրվածքում այդ լուսամուտները չկան նաև արևելյան արսիդում և այսպիսով 32 լուսամուտից տաճարը լուսավորում են միայն... 9-ը (Նյութեր... հատ. 1, էջ 240)։

նություն ունեցող պատի ամբողջ ծանրությունն ընկնում է միայն մեկ, 0,8 մետր տրամագիծ ունեցող սյան վրա,—այս բոլոր, 7-րդ դարի բարձրարվեստ ճարտարապետության համար միանգամայն խորթ լուծումները խիստ մեծ անջրպետ են ստեղծում Թորամանյանի վերակազմության նախագծի և հայկական ճարտարապետության այդ կլասիկ դարաշրջանի հիմնական սկզբունքների միջև, որոնց առավել հատկանշական կողմը դա կառուցվածքի ընդհանուր տեկտոնիկական մշակումն է և ավելորդ, կեղծ, դեկորատիվ ծավալների ու էլեմենտների իսպառ բացակայությունը:



Նկ. 8. Զվարթնոցի երկրորդ յարուսի հատակագիծը կազմված ըստ Թորամանյանի կտրվածքի և ճակատի գծագրերի:

5—7-րդ դարերի լավագույն կառուցվածքներում հուշարձանների ներքին կոմպոզիցիաներն իրենց որոշակի դրսևորումն են գտնում արտաքին ծավալներում, ընդ որում բոլոր կոնստրուկտիվ հարցերը լուծվում են ընդհանուր ծավալային կոմպոզիցիայի հետ անխզելի միասնականության պայմաններում, մի բան, որ լիովին բացակայում է Թորամանյանի վերակազմության նախագծի երկրորդ յարուսում:

Թորամանյանի վերակազմության նախագծի երկրորդ յարուսի տեկտոնիկական այս հակասությունը նշում է նաև Ա. Վ. Կուզնեցովը, որն առաջարկում է նույնիսկ տաճարի արտաքին կոմպոզիցիայի իր էսքիզը[8]: Սակայն պետք է նշել, որ նա բնավ հաշվի չի առել Զվարթնոցի իրական համաչափությունները, և էսքիզում պատկերված ցածր (մոտ 5—6 մետր բարձրություն ունեցող) պեդեստալային առաջին յարուսը բնավ չի կարող գոյություն ունենալ թեկուզ հենց այն պատճառով, որ տեղում պահպանված սյուները և կամարները անժխտելի կերպով ապացուցում են այդ յարուսի մի քանի անգամ ավելի բարձր լինելը: Բացի այդ, անհամոզեցուցիչ է պատկերված նաև երկրորդ յարուսը (չնայած իր, միանգամայն իրավացի ընդհանուր տետրակոնխային կոմպոզիցիային): Այստեղ, ինչքան էլ դա տարօրինակ թվա, բացակայում են ... մույթերը, և գմբեթակիր քառակուսին ուղղակի իջնում է ներքև, մինչև առաջին յարուսի տանիքը: Դժվար չէ տեսնել, որ տետրակոնխային այդպիսի կոմպոզիցիան հնարավոր է միայն անհամեմատ ավելի փոքր հուշարձաններում, մինչդեռ այստեղ, Զվարթնոցում, գմբեթակիր կամարների զգալի մեծության հասնող հորիզոնական ճիգերի առկայության պայմաններում, այսպիսի լուծումն իսպառ բացառված է և անհնար: Խոսելով Զվարթնոցի կոմպոզիցիոն առանձնահատկությունների մասին, Կուզնեցովը գրում է հետևյալը. «Դժվարություններն, որոնք առկա են ավելի ճշմարտացի և այս մեծ հուշարձանին արժանի վերակազմության նախագիծ կազմելու գործում, պայմանավորված են հենց Զվարթնոցի կոնստրուկտիվ տեսակետից ոչ տրամաբանական հատակագծով: Սա-

[8] А. В. Кузнецов. Тектоника и конструкция центричных зданий. Москва, 1951, стр. 112.

կայն այս բանը չի բացառում վերակազմության մի այլ նախագծի հնարավորությունը», և հետո «տվյալ հատակագծային կոմպոզիցիան ունեցող տաճարի կառուցման անհնարինությունը մեկ անգամ ևս ապացուցվեց XI դարում Անիում Գագիկ թագավորի կողմից Զվարթնոցի տիպի մի այլ տաճարի կառուց-



Նկ. 9. Զվարթնոցի կոնստրուկտիվ սխեման, կատարված ըստ Թորամանյանի նյութերի։

ման ժամանակ, որն անսպասելիորեն կործանվեց, չնայած օժանդակ ամրացումների առկայությանը»[9]։

Ա. Վ. Կուզնեցովի այս գրույթների հետ, փհարկե, չի կարելի համաձայնել։ Ճիշտ կերպով նշելով Թորամանյանի նախագծի թերությունները, Կուզնեցովը հանգում է շատ հեռու գնացող հետևություններին, Զվարթնոցի հատակագիծը իբր ոչ տրամաբանական լինելու մասին, և չարիքների արմատը փորձում գտնել հենց ... տաճարի հատակագծում, մոռանալով, որ Զվարթնոցը կանգուն էր շուրջ 300 տարի — մի բան, որն արդեն հիմնավորապես ժխտում է նրա հատակագիծը ոչ տրամաբանական հայտարարելու փորձերը։

[9] А. В. Кузнецов, указ. соч., стр. 114.

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Դագիկաշենի կործանման պատճառը ոչ թե նրա կառուցման տեխնիկային վերագրվող թերություններն են, այլ այդ նույն Զվարթնոցի տիպի հատակագծի վրա բարձրացված երկրորդ յարուսի ռոտոնդային կոմպոզիցիայի հետևանքով վերասլաց համաչափություններ ունեցող սյուների դերլարվածությունը, և հենց այդ էլ, ի վերջո, կանգնեցրեց այդ հանգուցն կոմպոզիցիան, որն արդեն դուրս էր եկել իր ժամանակի շինարարական տեխնիկայի սահմաններից, կործանման առաջ։ Ի հակադրություն Դագիկաշենի, Զվարթնոցի վերը նշված «երկարակեցությունը» բնավ չի կարող պատահական լինել և չի կարելի համաձայնել Թորամանյանի այն տեսակետի հետ, որ Դագիկաշենի կործանման հիմնական պատճառը իրր եղել է նրա վերին մասերի և հատկապես թաղերի ու կամարների լիցքերը սովորական կրաբետոնից և ոչ պեմզայից անելը, ինչպես այդ տեսնում ենք Զվարթնոցում։



Նկ. 10. Առանձին կանգնած սյան բեռնավորումը ըստ Թորամանյանի վերակազմության նախագծի։ Աջակողմյան մասում համեմատության համար ցույց է տրված ժամանակակից բնակելի շենքի նույն չափերը ունեցող մի հատված։

Ինչպես ցույց է տալիս X—XI դարի հուշարձանների ուսումնասիրությունը, նույնիսկ ամենափոքր կառուցվածքներում որոշակի կերպով զգացվում է ճարտարապետների ձգտումը որքան հնարավոր է թեթևացնել թաղերի և կամարների բեռնվածությունը։ Այս շրջանում ևս լայնորեն օգտագործվում է հնում այնքան լավ հայտնի, հիմնական կրող թաղերը երկրորդ, կրաբետոնյա թաղերով թեթևացնելու տեխնիկան, և բացի այդ, որոշ տեղերում նույն նպատակի համար օգտագործում են նաև կարասներ։ Այս պայմաններում հավիվ թե հնարավոր լինի կասկածել, որ Տրդատի[10] այս հոյակապ տաճարում ևս կիրառվել են բոլոր հնարավոր միջոցները կառուցվածքների կոնստրուկտիվ ամրությունը ապահովելու համար, և թեև այստեղ չի օգտագործվել պեմզան, կասկած չի կարող լինել, որ այստեղ ևս եղել են կրաբետոնյա թաղերով պարփակվող դատարկ տարածություններ։

Կառուցելով այս հոյակապ տաճարը, Տրդատը ոչ թե կուրորեն կրկնեց Զվարթնոցը, այլ հիմնականում պահպանելով նրա և՛ հատակագիծը, և՛ կոնստրուկտիվ սկզբունքները, նույն այդ հիմքի վրա վեր բարձրացրեց արդեն իր դարաշրջանի ոգուն համապատասխան մի հուշարձան։ Այդ ամենից առաջ դրսևորվեց տաճարի հատակագծում, որտեղ նա համարձակ կերպով մեծացրեց կենտրոնական տետրակոնխը, հրաժարվեց անկյունագծային ուղղությամբ դասավորված մուտքերից, ավելացրեց նիստերի քանակը, արմատապես փոխեց

[10] Իր տաճարի ճարտարապետը իսկապես եղել է Տրդատը, առաջին անգամ հիշատակում է Ստ. Մալխասյանը, նշելով նրա անվան առկայությունը Ասողիկի ձեռագրերից մեկում (Ստեփանոսի Տարոնացւոյ Ասողկան պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 282)։

լուսամուտների և արտաքին ճակատը ձևավորող էլեմենտների բոլոր համաչափությունները, հրաժարվեց Զվարթնոցի դուրս եկող շքամուտքերից և չկրկնեց Զվարթնոցի և ոչ մի դեկորտաիվ էլեմենտ (նկ. 11)։ Խիստ ուշագրավ է, որ նա չկրկնեց նաև Զվարթնոցի արևելյան մասի հետագայում ավելացված կառուցված քը, և Գագիկաշենը այսպիսով բարձրացավ որպես մի հուշարձան, որը Զվարթնոցի սկզբնական կոմպոզիցիայի նման ուներ միատեսակ ծավալային լուծումներ իր բոլոր ճակատներում[11]։ Արմատապես փոխվեցին նաև ինտերյերի բոլոր համաչափությունները՝ ինչպես նույն էպոխայի մյուս կառուցվածքներում, այնպես էլ այստեղ ներքին ծավալները ձգվեցին դեպի վեր և դրան համապատասխան էքսեդրայի սյուները ստացան խիստ վերասլաց համաչափություններ։ Միաժամանակ ձգտելով հասնել ինտերյերի էլ ավելի ծավալային միասնականությանը Տրդատը Զվարթնոցի արևելյան աբսիդի խուլ պատը փոխարինեց մյուս աբսիդների նման թափանցիկ սյունաշարքով, որը հնարավորություն տվեց աբսիդում կատարվող ծիսակատարությունը լսել նաև արևելյան կողմից։



Նկ. 11. Գագիկաշենի հատակագիծը։

Դարաշրջանի ճարտարապետական ուղղության ամենահիմնական պահանջներից մեկը՝ արտաքին ծավալային միասնական կոմպոզիցիաներ ստանալու ձգտումը, է՛լ ավելի ցայտուն կերպով դրսևորվեց տաճարի երկրորդ յարուսում, որտեղ ներքին տետրակոնխը պարփակվեց առաջին յարուսի ութ մեծաթռիչք կամարների վրա հենվող շրջանաձև պատով, և այսպիսով ի հակադրություն Զվարթնոցի տետրակոնխային կոմպոզիցիայի Գագիկաշենի երկրորդ յարուսը ևս ստացավ ռոտոնդային կոմպոզիցիա։

Ծավալային միասնական լուծումներ ստանալու ձգտումը միանգամայն օրինաչափ երևույթ է հայկական ճարտարապետության այդ շրջանի համար։

X—XI դարերում, երբ երկիրը բաժանված էր բազմաթիվ մանր ֆեոդալական կազմավորումների միջև, երբ ոչ նյութական հնարավորություններ

[11] Գագիկաշենի արևելյան կողմում եղած փոքրիկ ավանդատունը նույնպես հետագայում է ավելացվել (Н. Я. Марр. Ани, стр. 58) և այն հանգամանքը, որ Գագիկաշենում ևս իսպառ բացակայում են դեպի վեր տանող աստիճանները, վկայում է, որ ինչպես Զվարթնոցում, այնպես էլ այստեղ բացակայել է վերնահարկը։ Վերնահարկ չի եղել նաև Զվարթնոցի տիպի, շատ ավելի լավ պահպանված այնպիսի կառուցվածքներում ինչպիսիք են Լյակիտը և Բանան։

կային. և ոչ էլ անհրաժեշտություն՝ մեծածավալ տաճարներ կառուցելու, լայն տարածում են ստանում համեմատաբար փոքր կառուցվածքները և նրանց կառուցողական պրակտիկայի ընդերքում է, որ հիմնականում մշակվում և իր որոշակի դեմքն է ստանում այդ էպոխայի ոճական նոր ուղղությունը։ Այժմ

Նկ. 12. Գագիկի արձանը տաճարի մոդելը ձեռքին։

արդեն ոչինչ չէր ստիպում արտաքին ծավալային մշակման մեջ դրսևորել ինտերյերի շատ անդամ բարդ, մասնատված լուծումները, և ճարտարապետները համարձակ կերպով արտաքին մի միասնական ծավալի մեջ են սկսում պարփակել նրանց։ Այսպես են մշակված և Արուղամբենցը և Փոքրիչը և Սանահնի կլոր եկեղեցին և շատ ուրիշ կառուցվածքներ։

Ոճական ահա այս նոր տեղեկությունն էլ իր նոր դրսևորումը գտավ Գագիկաշենում, որտեղ երկրորդ յարուստում տետրակոնխը պարփակվեց մի շրջագծային պատով և ստացավ ռոտոնդային լուծում, մի բան, որն իր որոշակի դրսևորումը գտավ նաև պեղումների ժամանակ հայտնաբերված տաճարի մոդելում (նկ. 12)։ Սակայն այստեղ պետք է նշել մի էական հանգամանք ևս։ Ինչպես դժվար չէր տեսնել, այսպիսի կոմպոզիցիայի ժամանակ երկրորդ յարուսի անկյունային մասերում կստացվեին շորս դատարկ և անօգտագործելի տարածություններ, որտեղ պետք է բացվեին ոչինչ չլուսավորող դեկորատիվ բազմաթիվ լուսամուտներ, ճիշտ այնպես, ինչպես այդ տեսնում ենք Թորամանյանի՝ Գագիկաշենի վերակազմության նախագծում։ Դժվար չէ կռահել, որ Անիի ճարտարապետները, որոնք կառուցել էին քաղաքը ձևավորող հոյակապ կառուցվածքներ և նրանց մեջ հատկապես տաճարի ճարտարապետ Տրդատը, որի գործերը առանձնակի աչքի են ընկնում իրենց տեկտոնիկական ամբողջականությամբ, չէին կարող թույլ տալ այսպիսի կոպիտ կեղծիք քաղաքի ամենանշանավոր կառուցվածքներից մեկում։ Եվ մեզ թվում է, որ այստեղ ևս օգտագործված է եղել հայկական ճարտարապետությանն այնքան յուրահատուկ կոնստրուկտիվ լուծումներից մեկը՝ եռանկյունաձև խորշերը, որոնք նույն այդ էպոխայում այնքան մեծ հմտությամբ օգտագործված են և Աբուղամրենցում և Սանահնում և շատ այլ հուշարձաններում։

Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Գագիկաշենի մանրանկարը հանդիսացող Հովվի եկեղեցում, որը նույն XI դարի գործ է հանդիսանում, առկա են այդ խորշերը և, որը գլխավորն է, նրանք առկա են նրա երկրորդ յարուսում — ճիշտ այնտեղ, որտեղ որ եղել են նրանք Գագիկաշենում։ Եվ այն հանգամանքը, որ Հովվի եկեղեցում այդ արտաքին խորշերը բացարձակապես և ոչ մի կոնստրուկտիվ գեր չունեն, որոշակի կերպով վկայում է, որ այս հարցում ևս, ինչպես և այս գողտրիկ կառուցվածքի ընդհանուր կոմպոզիցիան ընտրելիս, ճարտարապետն իր աչքի առջև ուներ նրա հոյակապ նախօրինակը՝ Գագիկաշենը։

Եվ մեզ թվում է, որ Գագիկաշենի երկրորդ յարուսը ևս լուծված է եղել հենց այս սկզբունքի համաձայն և պեղումների ժամանակ հայտնաբերված եռանկյունաձև տրոմպի քարերը, որոնց տաճարի ներսում հնարավոր չէ և ոչ մի այլ տեղ տեղավորել, ի սկզբանե պատկանել են հենց այս արտաքին խորշերին։

Այս համեմատաբար մեծ խորշերը, բնավ չխախտելով տաճարի երկրորդ յարուսի ռոտոնդային կոմպոզիցիան, հնարավորություն են տվել խուսափել այստեղ առաջացող դատարկ տարածություններից և, մյուս կողմից՝ զգալիորեն թեթևացնել կրկնակի կորություն ունեցող կամարների վրա եկող բեռնավորվածությունը (նկ. 13)։

Այն հանգամանքը, որ խորշերը շրջանցող կամարները ավելի մեծ թռիչք են ունեցել, քան տաճարը շրջանցող կամարաշարքը, մեզ բնավ չպետք է զարմացնի, որովհետև անհավասար թռիչքներով կամարների առկայությունը լավ հայտնի է նույն այդ շրջանի բազմաթիվ կառուցվածքներում (Անիի մայր տաճարը, Մարմաշեն և այլն)։

Իսկ ինչ վերաբերում է խորշերի բացակայությանը տաճարի մոդելի վրա, ապա պետք է ասել, որ հայկական ճարտարապետության մեջ մոդելները դրսևորում էին կառուցվածքների ընդհանուր գծերը միայն, և այն էլ շատ

պայմանական ձևով։ Բավական է համեմատել Հաղպատի և Սանահնի կտիտորական պատկերաքանդակներում ներկայացված մոդելները իրական կառուցվածքների հետ, այդ բանում համոզվելու համար։ Եվ չնայած նրան, որ Գադիկաշենի մոդելը, մյուս մոդելների համեմատ, աչքի է ընկնում իր մշակվածության աստիճանով, այստեղ ևս խիստ պայմանական ձևով են պատկերված և նրա համաչափությունները, և հատկապես արտաքին ճակատը ձևավորող էլեմենտները։ Բացի այդ, այն հանգամանքը, որ թեթևության համար մոդելը արված է եղել սնամեջ, ինքնին արդեն բացառում էր նրա առանց այն էլ բարակ պատերի վրա խորշեր պատկերացնելու հնարավորությունը։

Այսպիսով դժվար չէ տեսնել, որ Գադիկաշենի մոդելը, որտեղ ցայտուն կերպով դրսևորվում է VII դարի ճարտարապետական սկզբունքներից այնքան զգալի չափով տարբերվող ոճական նոր ուղղությունը, բնավ չի կարող ելակետ հանդիսանալ VII դարի ամենանշանավոր կառուցվածքներից մեկի, Զվարթնոցի սկզբնական կերպարի բացահայտման հարցում, մի հուշարձանի, որն իր բոլոր հատկանիշական գծերով ամենասերտ կերպով կապված է V—VII դարերի հայկական ճարտարապետական կուլտուրայի հետ։ Պատկերացնել հակառակը և ենթադրել, որ չնայած այն հանգամանքին, որ իր բոլոր մանրամասներով և առանձին էլեմենտներով Զվարթնոցը կազմում է VII դարի հայկական ճարտարապետության անբաժանելի մասը, իր արտաքին ծավալային կոմպոզիցիայով նա արմատապես պետք է տարբերվի նույն էպոխայում մշակված տարածական լուծումներից և ըստ էության նմանվեր պատմական հաջորդ էպոխայում, ոճական միանգամայն այլ սկզբունքների հիման վրա մշակված ծավալային կոմպոզիցիաներին, կլիներ միանգամայն սխալ և անտրամաբանական։

Ընդհակառակը բոլոր հիմքերը կան ենթադրելու, որ ինչպես ինտերյերում, ինչպես դեկորատիվ հարդարանքում, այնպես էլ արտաքին տարածական լուծման մեջ Զվարթնոցի ճարտարապետը հարազատ է մնացել իր էպոխային, իր դարաշրջանին, և տեկտոնիկական այն հստակ սկզբունքը, որը այնքան յուրահատուկ էր VII դարին և որի ամենահիմնական ելակետներից մեկն էր ներքին ծավալային կոմպոզիցիայի դրսևորումը արտաքին ճակատներում, որոշակի տեղ է գտել նաև այստեղ, Զվարթնոցում։

Այս ամենից հետո պարզ է դառնում, որ Զվարթնոցի իրական կերպարը, նրա ծավալային լուծումը պատկերացնելու համար անհրաժեշտ է նորից վերադառնալ VII դարի կոմպոզիցիաներին և, հիմնականում ելնելով իր, հուշարձանի ավերակների մեջ պահպանված քարերից, փորձել գտնել այն ճարտարապետական կոմպոզիցիան, որն իսկապես արժանի լինի այս մեծ հուշարձանին և նրա կառուցող ճարտարապետի մեծ մտահղացումներին։

*
* *

Մեր ուսումնասիրությունները Զվարթնոցում (սկսած 1954 թ.) առաջին շրջանում ընթացան քարերի տեղադրման ֆիքսացիայի, չափագրման և նրանցից հանված ստվարաթղթի շաբլոնների համադրման ուղղությամբ։ Նյութերի համեմատական ուսումնասիրության հիման վրա հնարավոր եղավ ճշտել տաճարի հատակագիծը ընդհանրապես (ընդ որում պարզվեց, որ արևելյան ուղղանկյան կառուցվածքը ավելացված է հետագայում և այն բացակայել է տաճարի սկզբնական կոմպոզիցիայում), որոշակի դարձան ինչպես տա-





Նկ. 13. Գագիկաշենի երկրորդ յարուսը և վերակազմության նախագծի էսքիզը։

ճարի շքամուտքի ձևերը, այնպես էլ դռների կոնստրուկցիաները և լյունետների առկայությունը։ Ճշտվեցին արսիդների կամարաշարքերն իրենց բոլոր մանրամասնություններով, սյուների տեղաբաշխման առանձնահատկությունները, խոյակների դասավորությունը (որոնց վրա քանդակված Ներսես Գ-ի մոնոգրամներ որպես կանոն ուղղված են եղել դեպի օղակաձև սրահը), խոյակների վերնասալերի վրա դրվող միաձույլ սեղանաձև քարերի առկայությունը, արսիդի մի քանի վերակառուցումների հերթականությունները, կենտրոնական կառուցվածքի ինչ լինելը (ժխտվում են այն «մկրտության ավազան» համարող տեսությունները) և այլն։

Տաճարի ներքին կոնստրուկցիաների հիման վրա հնարավոր եղավ ճշտել առաջին յարուսի բարձրությունը, որն իր հերթին հնարավորություն տվեց վերակազմել նաև նրա հարդարանքը, ընդ որում ստացված բարձրությունը ճշտորեն համընկավ քարերի շարքերի բարձրությունների հետ։ Ճշտվեցին լուսամուտների չափերի և նրանց երկաթացանցի ձողերի դասավորությունը, ներքին կամարաշեղների մանրամասնությունները, օղակաձև լուսամուտների տեղաբաշխումը, նրանց այս անգամ արդեն քարե լուսանցույցներով ծածկված լինելը։

Երկրորդ յարուսի նիստերի քարերի հայտնաբերումը հնարավորություն տվեց պարզել, որ այստեղ նիստերը ճշտորեն համապատասխանել են առաջին յարուսի սյուների դասավորություններին, և բնավ բացակայել է ներքին տետրակոնխը շրջանցող մոտ 20 մետր բարձրություն ունեցող դեկորատիվ պատը և երկրորդ յարուսը ունեցել է ոչ թե ռոտոնդային, այլ խաչաձև կոմպոզիցիա, նման V—VII դարի բազմաթիվ հուշարձանների (Էջմիածին, Մաստարա, Բազարան, Արթիկ և այլն)։ Հնարավոր եղավ վերակազմել մի նիստի վերին մասը, լուսամուտի և վերջինիս կամարաղեղի հետ միասին, ընդ որում պարզվեց, որ նիստի լայնության չափը ճշտորեն հավասար է առաջին յարուսի սյուների հեռավորությանը, իսկ նիստի արտաքին անկյունը՝ հավասար հարևան երկու սյուների առանցքները միացնող գծերով կազմված անկյունը։ Գտնվեցին երկրորդ յարուսի քիվի քարերը, ընդ որում քիվի շառավիղը հավասար է ստացվում առաջին յարուսի արսիդների շառավիղներին։ Գտնվեցին նաև առաջին յարուսի շրջանաձև կոմպոզիցիայից երկրորդ յարուսի խաչաձև կոմպոզիցիային փոխանցող քարերը, մույթերի $^3/_4$ սյուների խոյակները, պարզվեց, որ Զվարթնոցը ունեցել է ոչ թե առագաստային, ինչպես ենթադրում էր Թորամանյանը, այլ տրոմպային փոխանցում. հնարավոր եղավ հավաքել տրոմպներից մեկի զգալի մասը, գտնվեցին գմբեթի ներսը ձևավորող դեկորատիվ ճառագայթների քարերը, ինչպես նաև բազմանիստ և արտաքինից խորշերով ձևավորված թմբուկի քարերը։

Այս բոլոր նյութերի հիման վրա հնարավոր եղավ կազմել տաճարի վերակազմության նոր նախագիծը, որին և մենք հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ հոդվածում։